ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԻՋՈՑ

Ռուզաննա Մնացականի Հաջոյան
ՀՊՏՀ Մարքեթինգի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

Սոցիալական քաղաքականությունը պետության համակողմանի գործունեությունն է՝ նպատակաուղղված բնակչության եկամուտների ձևավորմանը, զբաղվածության ապահովմանը, սոցիալական պաշտպանության համակարգի ստեղծմանը:

Սոցիալական քաղաքականությունը, որպես պետության կողմից իրականացվող սոցիալական բնույթի միջոցառումների ամբողջություն, ձևավորվել է 20-րդ դարի կեսերին, սակայն դեռևս դասականների աշխատություններում կարելի է հանդիպել սոցիալական քաղաքականության առանձին տարրերի տնտեսական գնահատմանը: Հայտնի է, որ 19-րդ դարի վերջերին աստիճանաբար սկսում է համակարգված բնույթ ստանալ տնտեսության պետական կարգավորումը: Իսկ արդեն 20-րդ դարի սկզբներից տնտեսագետների կողմից մշակվեցին սոցիալական քաղաքականության տարբեր մոդելներ, որոնց հիման վրա էլ առանձին երկրներ սկսեցին զարգանալ այս կամ այն ուղղությամբ, օրինակ, որպես «բարեկեցության պետություն»՝ Շվեդիայում, «սոցիալական պետություն»՝ Գերմանիայում և այլն[1]:

Բազմաթիվ տնտեսագետների կարծիքով սոցիալական քաղաքականության առավելությունները հանգում են հետևյալին.

- երկրում հաստատվում է սոցիալական կայունություն, ներդրումային բարենպաստ մթնոլորտ, տնտեսական աճի ապահովման կայուն նախապայման,
- նպաստում է աշխատուժի կառուցվածքի ու որակի լավացմանը, ստեղծվում են նոր աշխատատեղեր,
- բարձրացնում է բնակչության գերակշռող մասի կենսամակարդակը:

Հասարակության առաջընթացին զուգընթաց մեծանում է սոցիալական քաղաքականության դերը, առաջնահերթ են դառնում զբաղվածության կարգավորման, գիտության, կրթության, առողջապահության ոլորտների հարցերը, որոնցից են կախված տնտեսական աճի ներուժի ձևավորումը:

Պետության սոցիալական քաղաքականության արդյունավետությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ճշտել պետական սոցիալական քաղաքականության սահմանները, նպատակները, որոշել հիմնական խնդիրները, մշակել բնակչության սոցիալական երաշխիքներն ապահովող ծրագրեր և ամրագրել պետության սոցիալական քաղաքականության իրականացման

[1] **Արմենակյան Ռ. Ռ.** Բնակչության կենսամակարդակը և պետության սոցիալական քաղաքականությունը, Երևան, 2004, էջ 35:

օրենսդրական բազան:

ՀՀ-ում իրականացվող սոցիալական քաղաքականությանը բնորոշ են բազմաթիվ թերություններ՝ այն համակողմանի չէ և չունի հստակ ճշգրտված հասցեագրված բնույթ, հիմնականում ուշադրություն է դարձվում բնակչության դրամական եկամուտների առանձին տարրերի՝ աշխատավարձի, նպաստների, թոշակների և այլն, կարգավորմանը: Մինչդեռ՝ անհրաժեշտ է նվազ ապահով ընտանիքներին երկարաժամկետ վարկեր տրամադրել բնակարան և երկարատև օգտագործման ապրանքներ ձեռք բերելու համար, կարիքավորների համար ստեղծել մատչելի բժշկական ծառայության լայն ցանց և այլն: Դեռևս վերջնական լուծում չի ստացել հասարակական նշանակություն ունեցող սոցիալական ծառայությունների առանձին տեսակների վճարովի, արտոնյալ, անվճար կամ ապահովագրական լինելու հարցը: Միայն վերջիններիս հստակեցման դեպքում հնարավոր կլինի լուծել կրթության, գիտության, առողջապահության և այլ ոլորտներից օգտվելու խնդիրները: Սոցիալական քաղաքականության սահմանները հստակ առանձնացնել հնարավոր չէ, քանի որ տնտեսական կյանքի բոլոր երևույթներն ու գործընթացները այս կամ այն կերպ ազդում են հասարակական կյանքի սոցիալական ոլորտի, հետևաբար նաև, մարդկանց կենսագործունեության պայմանների ու բարեկեցության վրա: Հասարակության կենսագործունեության տնտեսական ու սոցիալական ոլորտների միջև գոյություն ունի երկկողմանի կապ, այսինքն՝ տնտեսական աճով է պայմանավորված սոցիալական ոլորտի հետագա զարգացումը, միաժամանակ, սոցիալական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները կարող են տարբեր կերպ ազդել տնտեսվարող սուբյեկտների տնտեսական գործունեության արդյունքների, նրանց աշխատանքի արտադրողականության վրա:

Սոցիալական քաղաքականության նպատակն է բնակչության եկամուտների կայուն աճի ապահովման համար համապատասխան պայմանների ստեղծումը, որին կարելի է հասնել բնակչության տնտեսական ակտիվության բարձրացման, տնտեսապես ոչ ակտիվ բնակչությանը օժանդակություն ցուցաբերելու զբաղվածության ապահովման, միջոցով: Հստակորեն կարելի է ասել, որ ներկայում իրականացվող սոցիալական քաղաքականությունը կրում է տարերային բնույթ, այն չի նպաստում այդ բնագավառում գոյություն ունեցող հիմնախնդիրների լուծմանը: Հետևաբար՝ նպատակահարմար է մշակել տնտեսական զարգացման երկարաժամկետ որոշակի ուղղություն, որը կխթանի տնտեսական աճը, և թույլ կտա արմատապես լուծել զարգացման տվյալ ժամանակահատվածում երկրում ծագած սոցիալական խնդիրները, իսկ հասարակությունն էլ կհայտնվի որակական նոր իրավիճակում:

Սոցիալական քաղաքականություն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել հետևյալ սկզբունքներով.

- ելնելով երկրի սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներից՝ առանձնացնել սոցիալական քաղաքականության առաջնային ուղղությունները,
- սոցիալական քաղաքականության հետագա զարգացումը մշակելիս հենվել իրական տնտեսական ձեռքբերումների վրա,
- սոցիալական քաղաքականությունը դիտել որպես տնտեսական աճի հիմնական գործոն,
- սոցիալական քաղաքականությունն իրականացնել երկրի ֆինանսավարկային, կառուցվածքային, ներդրումային և այլ կարգի քաղաքականությունների հետ կապված,
- սոցիալական քաղաքականություն իրականացնելիս հասնել գործողությունների կոորդինացմանը բոլոր մակարդակներում՝ տարածաշրջանային, միկրո, մակրո[1]:

Կարելի է առանձնացնել պետության սոցիալական քաղաքականության հետևյալ հիմնական ուղղությունները.

- մարդկային կապիտալի ձևավորման քաղաքականություն (կրթություն, առողջապահություն, գիտություն, մշակույթ և այլն),
- աշխատանքի շուկայում իրականացվող քաղաքականություն,
- սոցիալական պաշտպանության համակարգի ձևավորման քաղաքականություն,
- եկամուտների ձևավորման քաղաքականություն[2]:

Հայաստանում եկամուտների անհավասարության խորացման օբյեկտիվ և սուբյեկտիվ պատճառները հաշվի առնելով՝ անհրաժեշտ է զարգացման ներկա ժամանակահատվածի համար մշակել տնտեսական կայունություն և ցածր խոցելիություն ունեցող աղքատության հաղթահարման ռազմավարություն, ինչպես նաև փորձել հստակեցնել կայուն զարգացմանն անցնելու ժամանակահատվածը կամ միջակայքը: Այսինքն՝ անհրաժեշտ է ունենալ ապագայի զարգացման հստակ տեսլական, որը հնարավորինս չի ենթարկվի ներքին և արտաքին տնտեսական ցնցումների: Այս համատեքստում կարևոր նշանակություն կունենա բնակչությանը կոնկրետ հիմնական տարիքային խմբերի առանձնացնելը, և յուրաքանչյուր խմբի համար որոշակի նպատակային քաղաքականություն մշակելը, քանի որ արտագաղթի բարձր տեմպերը հանգեցրել են բնակչության կառուցվածքային լուրջ տեղաշարժերի, որի արդյունքում տնտեսապես ակտիվ բնակչության մրցունակությունն անկում է ապրել: Առաջ եկած նոր միտումները, ինչպես նաև աղքատության ու անհավասարության դինամիկան վկայում են, որ տնտեսական ու սոցիալական

---

[1] **Արմենակյան Ռ. Ռ.** Բնակչության կենսամակարդակը և պետության սոցիալական քաղաքականությունը, Երևան, 2004, էջ 50:

[2] Նույն տեղում՝ էջ 52:

քաղաքականությունները պետք է տնտեսական աճն ու վերաբաշխումը ավելի նպատակայնորեն ուղղեն աղքատ խավերի եկամուտների ուղղակի ու անուղղակի աճին և, հետևապես՝ աղքատության ու անհավասարության կրճատմանը:

Եկամուտների անհավասար բաշխման հետևանքով գնալով խորանում է բնակչության բևեռացումը հարուստների և աղքատների: Սա էլ հենց ստիպում է կառավարությանը մշակել և իրականացնել աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր: Այդ ուղղությամբ աշխատանքները սկսվել են դեռևս 2000թ-ից, երբ կառավարությունը աղքատության նվազեցումը հայտարարեց որպես հիմնական նպատակ: 2001թ. ընդունվեց աղքատության կրճատման միջանկյալ ծրագիրը, 2003թ. 2003-2015-ի ռազմավարական ծրագիրը, 2014թ.՝ 2014-2025թթ. աղքատության կրճատման հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը, սակայն խնդիրը մնում է չլուծված՝ պայմանավորելով նոր կառավարության կողմից նոր սոցիալական քաղաքականության իրականացման անհրաժեշտությունը:

ՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ՄԻՋՈՑ

Ռուզաննա Մնացականի Հաջոյան
ՀՊՏՀ Մարքեթինգի ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

Համառոտագիր

Սոցիալական քաղաքականությունը պետության նպատակաուղղված համակողմանի գործունեությունն է՝ ուղղված բնակչության եկամուտների ձևավորմանը, զբաղվածության ապահովմանը, սոցիալական պաշտպանության համակարգի ստեղծմանը:

Հոդվածում ներկայացվել են սոցիալական քաղաքականության դերը, նպատակը, առավելությունները, թերությունները, առաջնահերթությունները՝ գիտություն, կրթություն, առողջապահություն, քանի որ սոցիալական քաղաքականության նշված ուղղություններից է կախված տնտեսական աճի ներուժի ձևավորումը: Միևնույն ժամանակ, առաջարկվել է մշակել, տարածքային սոցիալ-տնտեսական համաչափ զարգացման ու աղքատության տարածքային անհամաչափությունները մեղմելուն ուղղված քաղաքականություններ:

Հիմնաբառեր. սոցիալական քաղաքականություն, աղքատություն, զբաղվածություն, սոցիալ-տնտեսական, առաջնահերթություն, ծրագիր, սոցիալական ապահովություն:

СОЦИАЛЬНАЯ ПОЛИТИКА ГОСУДАРСТВА КАК СРЕДСТВО ПРЕОДОЛЕНИЯ БЕДНОСТИ

Рузанна Мнацакановна Аджоян
Доцент кафедры маркетинга АГЭУ, кандидат экономических наук

Аннотация

Социальная политика – это целенаправленная комплексная деятельность государства, направленная на формирование доходов населения, обеспечение занятости и создание системы социальной защиты.

В статье представлена роль социальной политики, ее целей, преимуществ, недостатков, приоритетов – науки, образования и здравоохранения, поскольку потенциал экономического развития социальной политики зависит от указанных направлений. В то же время было предложено разработать политику, направленную на смягчение территориальных диспропорций территориального социально-экономического развития и нищеты.

Ключевые слова: социальная политика, нищета, занятость, территориальная, социально-экономическая, приоритетная, программа, социальное обеспечение.

THE STATE SOCIAL POLICY AS A MEANS OF OVERCOMING POVERTY

Ruzanna Mnatsakan Hajoyan
Associate professor at ASUE Marketing chair, PhD in Economics

Abstract

Social policy is a purposeful comprehensive activity of the state aimed at the formation of income of the population, ensuring employment, and establishing a social protection system.

The article presents the role of social policy, its goals, advantages, disadvantages, priorities - science, education, and healthcare, as the economic development potential of the social policy depends on the mentioned directions. At the same time, it was proposed to develop policies aimed at mitigating territorial disparities of territorial social-economic development and poverty.

Keywords: social policy, poverty, employment, territorial, socio-economic, priority, program, social security.